



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

19.01.2021Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 11 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Ն.Վարդանյանը, Մ.Պողոսյանը, Տ.Եփրեմյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղարի Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի սեփականության 2020 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Փողոցի անվանակոչելու համար համաձայնություն տալու մասին:
5. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -11

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1 Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:

/Չեկ. Գ.Ա.Ֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկում են.. ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության են դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -11

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2.Չարենցավան համայնքի սեփականության 2020 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

/Չեկ. Գ.Ա.Ֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի դրույթներով՝ առաջարկում են հաստատել Չարենցավան համայնքի սեփականության 2020 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության են դնում որոշումը:

Կողմ-11

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/: